

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ
ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ
ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից
պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ցանկանալով նպաստել պետական պահպանության օբյեկտների
անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների
պաշտպանության ոլորտում համագործակցության հետագա
զարգացմանն ու խորացմանը,

ուշադրություն դարձնելով Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից պետությունների՝ ահաբեկչության դեմ
պայքարում համագործակցության մասին 1999 թվականի հունիսի 4-ի
պայմանագրի դրույթներին,

ելնելով պետական պահպանության ենթակա անձանց և
պահպանվող օբյեկտների անվտանգության ապահովման ուղղությամբ
Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից
պետությունների համագործակցության համար իրավական հիմքի
զարգացման անհրաժեշտությունից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար կիրառվում են հետևյալ
հիմնական հասկացությունները.

պետական պահպանություն – պետական պահպանության
օբյեկտների անվտանգության ապահովման ոլորտում պետական
իշխանության մարմինների գործառույթ, որն իրականացվում է
պետական կառավարման կարիքների համար իրավական,
կազմակերպչական, տեղեկատվական, պահպանության,
պայմանակարգային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ
միջոցառումների ամբողջության հիման վրա,

պետական պահպանության օբյեկտ – Կողմերի օրենքներին և այլ
նորմատիվային իրավական ակտերին համապատասխան՝ պետական
պահպանության ենթակա անձ,

պահպանության միջոցառում – պետական պահպանության
օբյեկտների մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրերում, այդ
թվում՝ նրանց երթևեկման մայրուղիներում, Կողմերի լիազորված
պետական մարմինների կողմից իրականացվող գործողությունների
ամբողջություն, այդ թվում՝ անվտանգության ապահովման մյուս

պետական մարմինների ուժերի և միջոցների կիրառությամբ, որոնք ուղղված են պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովմանը և պահպանվող օբյեկտների պաշտպանությանը, պահպանվող օբյեկտներ – պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման նպատակով պաշտպանության ենթակա շենքեր, շինություններ և կառույցներ, որտեղ տեղակայված են պետական իշխանության մարմինները, նշված շենքերին, շինություններին և կառույցներին հարակից տարածքներ ու ջրային տարածություններ, ինչպես նաև, Կողմերի օրենքներին և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան, պաշտպանության ենթակա այլ օբյեկտներ, ժամանող Կողմ – պետություն, որի պետական պահպանության օբյեկտները ժամանում են ընդունող Կողմի տարածք, ընդունող Կողմ – պետություն, որի տարածքում իրականացվում են պահպանության միջոցառումներ՝ ժամանող Կողմի պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման նպատակով, սեփական անվտանգություն - արտաքին ու ներքին սպառնալիքներից Կողմերի լիազորված պետական մարմնի պաշտպանվածության վիճակ, որն ապահովում է նրա գործունեությունն ապակազմակերպող գործոններին դիմագրավելու կարողությունը, լիազորված պետական մարմին – գործադիր իշխանության պետական մարմին, որը լիազորված է պետական պահպանության ոլորտում:

Հոդված 2

Կողմերը՝ ի դեմս լիազորված պետական մարմինների, փոխգործակցություն են իրականացնում և համակարգում են իրենց գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

- ա) պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովում և պահպանվող օբյեկտների պաշտպանություն,
- բ) տեղեկատվության փոխանակում, տեղեկատվական համակարգերի, օպերատիվ հաշվառումների ու արխիվների հավաքում և օգտագործում,
- գ) պահպանության գործունեությունում նյութերի, տեխնիկական ու տրանսպորտային միջոցների, հանդերձանքի, զենքի, զինամթերքի, հատուկ միջոցների, սարքավորումների և կապի միջոցների օգտագործում,
- դ) լիազորված պետական մարմնի՝ իր անվտանգության ապահովում,
- ե) կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում,
- զ) նորմատիվային իրավական հենքի մշակում:

Համագործակցության կոնկրետ ուղղություններով Կողմերի լիազորված պետական մարմինների փոխգործակցության ու

գործունեության համակարգման կարգը և իրականացումը որոշվում են սույն Համաձայնագրին կից առանձին արձանագրություններով, որոնք կնքում են Կողմերը:

Հոդված 3

Պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պահպանվող օբյեկտների պաշտպանության ոլորտում Կողմերն իրականացնում են փոխգործակցություն ու համակարգում.

ա) Կողմերի տարածքում՝ պետական պահպանության օբյեկտների գտնվելու վայրերում՝ պահպանական միջոցառումների անցկացման ժամանակ,

բ) պետական պահպանության օբյեկտների ու պահպանվող օբյեկտների նկատմամբ հակաիրավական ոտնձգությունների կանխարգելման, բացահայտման և կանխման ժամանակ,

գ) պետական պահպանության օբյեկտների կենսական կարևորություն ունեցող շահերի համար սպառնալիքի մասին տեղեկատվություն ստանալու ժամանակ,

դ) ի շահ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման՝ օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացման ժամանակ:

Ըստ Կողմերի լիազորված պետական մարմինների հայցերի՝ Ընդունող կողմն ապահովում է պետական պահպանության ենթակա անձանց անվտանգությունը՝ Կողմերի օրենքներին և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան, ընդունող Կողմի տարածքում նրանց գտնվելու ընթացքում:

Պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ընդունող Կողմի տարածքում նրանց գտնվելու ընթացքում կարող է ապահովվել ընդունող Կողմի լիազորված պետական մարմնի որոշման համապատասխան:

Անհրաժեշտ քանակությամբ ուժերի և միջոցների հատկացումը, այդ թվում՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման համար պահանջվող ավտոտրանսպորտի, որոշում է ընդունող Կողմը՝ ելնելով նրանց անվտանգության համար սպառնալիքի բնույթից և իրականությունից՝ հաշվի առնելով ժամանող Կողմի լիազորված պետական մարմնի կարծիքը:

Հոդված 4

Կողմերը, իրենց օրենսդրությանը և սույն Համաձայնագրին համապատասխան, լիազորված պետական մարմինների իրավասության սահմաններում տեղեկատվություն են փոխանակում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ և միջոցներ են ձեռնարկում, Կողմերից մեկի հայցի համաձայն, դրա ստացման համար:

Կողմերի լիազորված պետական մարմինները փոխադարձ համաձայնեցմամբ տրամադրում են տեղեկություններ, որոնք ամփոփված են օպերատիվ հաշվառումներում և արխիվներում, ինչպես նաև այն տեղեկատվական համակարգերում, որոնք ստեղծվում են նրանց կողմից պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման նպատակով:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի լիազորված պետական մարմինների միջև փոխանակման ենթակա տեղեկությունների ցանկը, ինչպես նաև հարցման և տեղեկատվության փոխանցման կարգը որոշում են Կողմերը՝ ըստ փոխադարձ պայմանավորվածության:

Կողմի լիազորված պետական մարմինն ապահովում է ստացված տեղեկատվության պահպանությունը, որը կարող է փոխանցվել երրորդ կողմի միայն տվյալ տեղեկատվությունը տրամադրած Կողմի լիազորված պետական մարմնի գրավոր համաձայնությամբ և նրա կողմից սահմանված ծավալով: Կողմերի կողմից այդ տեղեկատվության օգտագործումը չպետք է հանգեցնի նրանց հետաքրքրության օբյեկտների, անցկացվող համատեղ և/կամ համաձայնեցված միջոցառումների ու օգտագործվող օպերատիվ ուժերի և միջոցների բացահայտմանը:

Կողմերի լիազորված պետական մարմիններն անցկացնում են ծառայողական հետաքննություն (քննություն), այդ թվում, անհրաժեշտության դեպքում, համատեղ և/կամ համաձայնեցված, Կողմերի շահերին առնչվող տեղեկատվության կրիչների չթույլատրված տարածման կամ կորստի փաստերով:

Կողմերի պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների փոխանցումն ու պաշտպանությունը որոշվում են Կողմերի օրենսդրությամբ և սույն Համաձայնագրով:

Ստացված տեղեկատվության պաշտպանության ապահովման հետ կապված՝ Կողմերի պարտականությունները մնում են ուժի մեջ սույն Համաձայնագրի գործողության դադարումից հետո էլ:

Հոդված 5

Ձեռքի ներմուծումը, կրումը, կիրառումը և օգտագործումը, նյութերի, տեխնիկական ու տրանսպորտային միջոցների, հանդերձանքի, ռազմամթերքի, հատուկ միջոցների, սարքավորումների և կապի միջոցների ներմուծումը, արտահանումն ու օգտագործումը կարգավորվում են ընդունող Կողմի օրենսդրությամբ:

Հոդված 6

Կողմերի լիազորված պետական մարմինները ժամանակին տեղեկատվություն են փոխանակում Կողմերի լիազորված պետական մարմինների, Կողմերի լիազորված պետական մարմինների

աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների անվտանգության՝ իրենց հայտնի դարձած սպառնալիքների մասին, ինչպես նաև Կողմերի լիազորված պետական մարմինների աշխատակիցների հակաիրավական և այլ վարկաբեկիչ գործողությունների մասին:

Հոդված 7

Կողմերից յուրաքանչյուրը, համատեղ պահպանության միջոցառումների մասնակիցների իրավական կարգավիճակը հարգելով, նրանց համար ապահովում է բոլոր քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ծառայողական պարտականությունների կատարման համար:

Ընդունող Կողմի տարածքում Կողմի լիազորված պետական մարմնի աշխատակիցների ժամանակավոր բնակության հետ կապված իրավական հարցերում նրանք պետք է ղեկավարվեն հետևյալ սկզբունքներով.

ժամանող Կողմի լիազորված պետական մարմնի գործողությունները չպետք է հակասեն ընդունող Կողմի օրենսդրությանը,

ժամանող Կողմի լիազորված պետական մարմնի աշխատակցի կողմից իրավախախտում կատարվելու դեպքում նա պատասխանատվություն է կրում ընդունող Կողմի օրենսդրությանը համապատասխան,

դատավարական գործողությունների կատարման, ինչպես նաև իրավական օգնության տրամադրման ժամանակ Կողմերը ղեկավարվում են ազգային օրենսդրությամբ և իրենց ստանձնած միջազգային պարտավորություններով:

Պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովելու ժամանակ Կողմերը փոխհատուցում են ընդունող Կողմի տարածքում Կողմերի լիազորված մարմինների աշխատակիցների գործողությունների պատճառով հասցված վնասը:

Հոդված 8

Պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա Կողմերի լիազորված պետական մարմինները, Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան, փոխադարձ օգնություն են ցուցաբերում կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման գործում, այդ նպատակով օգտագործում են իրենց տրամադրության տակ եղած հատուկ ուսումնական բազան:

Կողմերի լիազորված պետական մարմինները պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա համագործակցություն են իրականացնում ուսումնամեթոդական, մանկավարժական և գիտահետազոտական

գործունեության ոլորտում փորձի, ուսումնամեթոդական նյութերի, գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակման, փորձագիտական օգնության ցուցաբերման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտական հետազոտությունների համակարգման միջոցով:

Հոդված 9

Կողմերը փոխգործակցում են ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման, համագործակցության նորմատիվային իրավական բազայի կատարելագործման հարցերի շուրջ՝ Կողմերի լիազորված պետական մարմինների արդյունավետ գործունեության ապահովման նպատակով և հօգուտ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման ու պահպանվող օբյեկտների պաշտպանության:

Կողմերի լիազորված պետական մարմինները, ազգային օրենսդրությանը համապատասխան, փոխանակում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նորմատիվային իրավական ակտեր:

Հոդված 10

Գործունեության կոնկրետ ուղղություններով Կողմերն անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծել համակարգման համատեղ շտաբներ, խորհուրդներ կամ աշխատանքային խմբեր, փոխանակել ներկայացուցիչներ, որոնց կարգավիճակը և լիազորությունները սահմանվում են սույն Համաձայնագրին կից առանձին արձանագրությունների հիման վրա, և մշակել համատեղ միջոցառումների ծրագրեր:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից է նա:

Հոդված 12

Կողմերի միջև վիճելի հարցերը, որոնք ծագում են սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ժամանակ, լուծվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների ու բանակցությունների կամ Կողմերի միջև համաձայնեցված այլ ընթացակարգի միջոցով:

Հոդված 13

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք դրա անբաժանելի մասն են և ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահին հանձնելու օրվանից:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը բաց է Անկախ պետությունների համագործակցության ցանկացած մասնակից պետության միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու միջոցով:

Միացած պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից:

Հոդված 16

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն Համաձայնագրից՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ, կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ ծագած ֆինանսական և այլ պարտավորությունները:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 2008 թվականի հոկտեմբերի 10-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կողարկի դրա հաստատված պատճենը:

Սույն Համաձայնագիրն ստորագրվել է Ադրբեյջանի Հանրապետության կողմից (վերապահումով), Հայաստանի Հանրապետության կողմից (առարկությամբ), Բելառուսի Հանրապետության կողմից, Ղազախստանի Հանրապետության կողմից, Ղրղզստանի Հանրապետության կողմից, Մոլդովայի Հանրապետության կողմից (վերապահումով), Ռուսաստանի Դաշնության կողմից, Տաջիկստանի Հանրապետության կողմից, Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

Հայաստանի Հանրապետության համար համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 26-ին:

Ադրբեջանի Հանրապետության
վերապահումը

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագրի վերաբերյալ

1. Բացառությամբ 10-րդ հոդվածի:

2. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրում շարադրված իրավունքներից, պարտականություններից և դրույթներից ոչ մեկն Ադրբեջանի Հանրապետությունը չի կիրառելու Հայաստանի Հանրապետության հանդեպ մինչև Ադրբեջանի Հանրապետության բոլոր գրավված տարածքների ազատումը և Ադրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության ագրեսիայի հետևանքների ամբողջական վերացումը:

Ադրբեջանի Հանրապետության
վարչապետ՝

Ա. Ռասի-գադե

Հայաստանի Հանրապետության առարկությունն ընդդեմ Ադրբեջանի
Հանրապետության վերապահման

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագրի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը չի ընդունում Ադրբեջանի Հանրապետության վերապահումը Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրի վերաբերյալ, քանի որ այն անհամատեղելի է նշված փաստաթղթի առարկայի և նպատակների հետ, ինչպես նաև խեղաթուրում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի էությունը հակամարտության այն իրական պատճառների և հետևանքների հարցում, որոնք ծագել են ԼՂՀ ժողովրդի ազատ կամարտահայտման դեմ Ադրբեջանի Հանրապետության կողմից

ռազմական ուժի կիրառման և ԼՂՀ դեմ կատարված ագրեսիայի հետևանքով:

Նշված վերապահման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի Հանրապետության հանդեպ նույնպես չի կիրառելու Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրի դրույթները:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ՝

Ս. Սարգսյան

Մոլդովայի Հանրապետության վերապահունը

ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի որոշման վերաբերյալ՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխհամագործակցության մասին համաձայնագրի մասին

10 հոկտեմբեր 2008թ.

ք. Բիշկեկ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրի շրջանակներում Մոլդովայի Հանրապետությունը կհամագործակցի՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից և տվյալ ոլորտում միջազգային պարտավորություններից:

Մոլդովայի Հանրապետությունն իրեն ազատ է համարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրի այն մասի պարտավորություններից, որն առնչվում է օրենսդրության ներդաշնակեցմանը, համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը, Մոլդովայի Հանրապետության տարածքում համակարգման համատեղ մշտական շտաբների, խորհուրդների կամ աշխատանքային խմբերի ստեղծմանը:

Մոլդովայի Հանրապետությունն իրեն ազատ է համարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին Համաձայնագրի 16-րդ հոդվածի այն մասի պարտավորություններից, որն առնչվում է ֆինանսական և այլ պարտավորությունների կարգավորմանը:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ պետական պահպանության ենթակա անձանց

անվտանգության ապահովման ուղղությամբ փոխգործակցության մասին
Համաձայնագրի դրույթները կիրականացվեն միայն Մոլդովայի
Հանրապետության օրենսդրական մարմինների օգնությամբ և նրանց
հետ համագործակցությամբ:

Մոլդովայի Հանրապետության
նախագահ՝

Վ.Վորոնին